

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 15. 09. 2017թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստը կայացավ հեռահար կապի միջոցով: Հաղորդակցություններ են ուղարկել գիտական խորհրդի 29 (քսանինն) անդամների:

ՕՐԱԿԱՐԳ

Նկատի ունենալով հարցի կարևորությունը՝ գիտական խորհրդի նախագահ Ս.

Մինասյանի հանձնարարությամբ գիտական խորհրդի անդամները ս. թ. սեպտեմբերի 7-ին էլեկտրոնային փոստի և հաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ իրազեկվել են գիտական խորհրդի արտահերթ նիստի օրակարգային հարցի բովանդակությանը: Ներկայացված հարցի վերաբերյալ վերջնական որոշումը կայացվել է՝ հիմնվելով ս.թ. սեպտեմբերի 7-ին գիտական խորհրդի 29 անդամից 25 անդամի գրավոր համաձայնության վրա:

1. Թարգմանիչ, գրական քննադատ, հրապարակախոս ԱՄՆ Ֆրիմոնտ քաղաքի <<Արձագանք >> բարեգործական հիմնադրամի նախագահ Մարո Մադոյան-Ալաջաջյանին ԳՊՄԻ-ի «Ոսկե մեդալով» պարգևատրելու մասին:

2. Թատերագետ Ռազմիկ Մադոյանի անվան լսարանի անվանակոչության մասին

Հաղորդագրության տարածող՝ գիտական քարտուղար Կ. Պետրոսյան

1.ԼՍԵՑԻՆ՝

Թարգմանիչ, գրական քննադատ, հրապարակախոս ԱՄՆ Ֆրիմոնտ քաղաքի <<Արձագանք >> բարեգործական հիմնադրամի նախագահ Մարո Մադոյան-Ալաջաջյանին բուհի ուսանողներին ցուցաբերած բարեգործական աջակցության հանար «ԳՊՄԻ-ի Ոսկե մեդալով» պարգևատրելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Թարգմանիչ, գրական քննադատ, հրապարակախոս ԱՄՆ Ֆրիմոնտ քաղաքի <<Արձագանք >> բարեգործական հիմնադրամի նախագահ Մարո Մադոյան-Ալաջաջյանին «ԳՊՄԻ-ի Ոսկե մեդալով» (հ. 034) պարգևատրելու հարցը ներկայացնել հաջորդ գիտխորհրդի հաստատմանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ում թատերագետ Ռազմիկ Մադոյանի անվան լսարանի անվանակոչության մասին

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետում լսարան հատկացնել թատերագետ Ռազմիկ Մադոյանի անունով անվանակոչելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Թատերագետ Ռազմիկ Մադոյանի անունով Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թիվ Դ2-7 լսարանի անվանակոչելու հարցը ներկայացնել հաջորդ գիտխորհրդի հաստատմանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: